Կոմիտաս

Մկրտիչ Ա.Խրիմյան Ամենայն Հայոց Կաթողիկոսին
1895, 25 հուլիսի, Ս. Էջմիածին

Վեհափառ Հօրն
Տ. Տ. Մկրտչի Ա.
Սրբազնագոյն Կաթուղիկոսին
Ամենայն Հայոց Քահանայապետ սուրբ,

Եօթն ամս անուցուցեալ է իմ ‘ի վերայ, յորմէ հետէ ժողովեմ զՀայոց ժողովրդական երգս եւ զպարերգս, զորոց տակաւին կարի սակաւ ինչ է յայտ զեղանակացն, զկազմութեանցն եւ զկնի:
Ժողովրդական եղանակքն Հայոց ‘ի պարզութիւն եւ ‘ի վեհութիւն իւրեանց զնմանութիւն բերեն զնուագաց շարականաց նախնեաց մերոց սրբոց, յորս արտայայտին կեանք եւ միտք Հայկեան սեռիս. եւ սոքա ցարդ կան թաղկեալ ‘ի թագստի եւ ‘ի կողմն յուշից եւ յուրուշից յիմաստնոց՝ ի փիլիսոփայից. եւ արդ եւեթ պահեալ կան ‘ի գեղջկական հանճարի նախնեաց թարմ եւ անխառն զգացմանց երաժշտութիւն, որ եւ խուն առ խուն և ‘ի կորուստ դիմեալ յառաջէ յերեւումն օտար եղանակաց: Եթէ ո՞չ տարածեսցէ զձեռսն, ‘ի բարձր բազուկ, յօճուն լինիլ, Հօտապետդ քարշել, հանել ‘ի կորստենէն իսպառսպուռ յանյատութիւն եւ ‘ի մոռացօնս դատապարտեսցին:
Բաց յայդմանէ, ‘ի ժողովրդական եղանակսն Հայոց իբրեւ զծիր իմն կարմիր նկատեն առընչութիւնք սոցա եղանակաց շարականաց: ‘Ի մէն միում յերգսն գեղջկայինսն որպէս զշող ցոլայ բնատուր հանճար Հայաստան ազին, որ եւ կարօտի բազմապիսի ուսումնասիրութեանց:

Ուստի համարձակիմ խնդրել ‘ի համբոյր Սուրբ Աջոյդ Հայրապետիդ, թոյլատրել, ‘ի բան բարձր հրամանի Ձերոյ, ի տպագրել զանգին գանձսն, զորս աւանդեալ է մեզ բազմահարուստ հանճարոյ նախնեաց մերոց սրբացելոց:

Քահանայապետիդ
Ամնախոնարհ ծառայ եւ որդի
Կոմիտաս Վարդապետ Սողոմոնեան